

ՎԻՇՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ռիվանագիտական հարաբերությունների մասին

Սույն Կոնվենցիայի Կողմեր հանդիսացող պետությունները.

նշելով, որ հնագույն ժամանակներից բոլոր երկրների ժողովուրդները ճանաչում են ռիվանագիտական գործակալների կարգավիճակը,

ուշադրության առնելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության նպատակներն ու սկզբունքները պետությունների ինքնիշխան հավասարության, միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման և ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը նպաստելու վերաբերյալ,

համոզված լինելով, որ ռիվանագիտական հարաբերությունների, արտոնությունների և անձեռնմխելիության մասին միջազգային Կոնվենցիայի կնքումը կնպաստի ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը, անկախ նրանց պետական և հասարակական կառուցվածքի տարբերություններից,

գիտակցելով, որ այդպիսի արտոնություններն ու անձեռնմխելիությունը տրվում են ոչ թե առանձին անձանց շահերի համար, այլ ռիվանագիտական ներկայացուցչությունների՝ որպես պետությունները ներկայացնող մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումն ապահովելու համար,

հաստատելով, որ սույն Կոնվենցիայի դրույթներով ուղղակիորեն չնախատեսված հարցերը կշարունակվեն կարգավորվել միջազգային սովորութային իրավունքի նորմերով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Կոնվենցիայի նպատակների համար ներքոնշյալ արտահայտությունները ունեն հետևյալ նշանակությունը.

ա) «ներկայացուցչության ղեկավարը» այն անձն է, որին ուղարկող պետությունը նշանակել է այդ կարգավիճակով հանդես գալու համար,

բ) «ներկայացուցչության անդամներ» են հանդիսանում ներկայացուցչության ղեկավարը և ներկայացուցչության անձնակազմի անդամները,

գ) «ներկայացուցչության անձնակազմի անդամներ» են հանդիսանում ռիվանագիտական անձնակազմի, վարչական և տեխնիկական անձնակազմի և ներկայացուցչության սպասվող անձնակազմի անդամները,

դ) «ռիվանագիտական անձնակազմի անդամներ» են հանդիսանում ներկայացուցչության անձնակազմի այն անդամները, որոնք ունեն ռիվանագիտական աստիճան,

ե) «ռիվանագիտական գործակալը» ներկայացուցչության ղեկավարն է կամ ներկայացուցչության ռիվանագիտական անձնակազմի անդամը,

զ) «վարչական և տեխնիկական անձնակազմի անդամներ» են հանդիսանում ներկայացուցչության անձնակազմի այն անդամները, որոնք իրականացնում են ներկայացուցչության վարչական և տեխնիկական սպասարկումը,

է) «սպասարկող անձնակազմի անդամներ» են հանդիսանում ներկայացուցչության անձնակազմի այն անդամները, որոնք կատարում են ներկայացուցչության սպասարկման պարտականությունները,

ը) «մասնավոր տնային աշխատողը» այն անձն է, որը կատարում է ներկայացուցչության անդամի տնային աշխատողի պարտականությունները և չի հանդիսանում ուղարկող պետության ծառայող,

թ) «ներկայացուցչության շինություններ» նշանակում են ներկայացուցչության նպատակների համար օգտագործվող շինությունները կամ շինությունների մասերը, ներառյալ ներկայացուցչության ղեկավարի նստավայրը, անկախ նրանից, թե ում է պատկանում դրանց սեփականության իրավունքը, ներառյալ տվյալ շինությունը կամ շինության մի մասին սպասարկող հողամասը:

Հոդված 2

Պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և մշտական դիվանագիտական ներկայացուցչությունների հիմնումը կատարվում են փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 3

1. Դիվանագիտական ներկայացուցչության գործառույթները «inter alia» (ի թիվս այլոց) կայանում են հետևյալում.

- ա) ուղարկող պետությունը ներկայացնել ընդունող պետությունում,
- բ) պաշտպանել ուղարկող պետության և նրա քաղաքացիների շահերը ընդունող պետությունում՝ միջազգային իրավունքով թույլատրելի շրջանակներում,
- գ) բանակցություններ վարել ընդունող պետության կառավարության հետ,
- դ) բոլոր օրինական միջոցներով պարզել ընդունող պետությունում առկա պայմաններն ու իրադարձությունները, և դրանց մասին հաղորդել ուղարկող պետության կառավարությանը,
- ե) խրախուսել բարեկամական հարաբերությունները ուղարկող պետության և ընդունող պետության միջև և զարգացնել նրանց փոխհարաբերությունները տնտեսության, մշակույթի և գիտության բնագավառում:

2. Մույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ դիվանագիտական ներկայացուցչության կողմից չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ՝ կատարելու հյուպատոսական գործառույթներ:

Հոդված 4

1. Ուղարկող պետությունը պետք է համոզված լինի այն բանում, որ ընդունող պետությունը ազդեման (թույլտվություն) է տվել այն անձին, որին ինքը ենթադրում է հավատարմագրել որպես ներկայացուցչության ղեկավար այդ պետությունում:

2. Ընդունող պետությունը պարտավոր չէ ուղարկող պետությանը հայտնել ազդեման տալը մերժելու պատճառները:

Հոդված 5

1. Ուղարկող պետությունը, պատշաճ ձևով տեղյակ պահելով համապատասխան ընդունող պետություններին, հանգամանքներից ելնելով կարող է մի քանի պետություններում հավատարմագրել ներկայացուցչության ղեկավարին կամ նշանակել դիվանագիտական անձնակազմի ցանկացած անդամին, եթե որևէ ընդունող պետության կողմից առարկություն չի հայտնվել:

2. Եթե ուղարկող պետությունը ներկայացուցչության ղեկավարին հավատարմագրում է մեկ կամ մի քանի պետություններում, ապա նա կարող է գործերի ժամանակավոր հավատարմատարների ղեկավարությամբ դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնել յուրաքանչյուր այն պետությունում, որտեղ ներկայացուցչության ղեկավարը չունի մշտական նստավայր:

3. Ներկայացուցչության ղեկավարը կամ ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի յուրաքանչյուր անդամ՝ որպես ուղարկող պետության

ներկայացուցիչ, կարող է գործել ցանկացած միջազգային կազմակերպության առընթեր:

Հոդված 6

Երկու կամ մի քանի պետություններ միևնույն անձին կարող են հավատարմագրել որպես ներկայացուցչության ղեկավար այլ պետությունում, եթե ընդունող պետությունը դրա դեմ չի առարկում:

Հոդված 7

5-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածներում նախատեսված բացառություններով հանդերձ ուղարկող պետությունը անարգել կարող է նշանակել ներկայացուցչության անձնակազմի անդամներ: Ինչ վերաբերում է ռազմական, ծովային և օդային կցորդներին, ապա ընդունող պետությունը կարող է առաջարկել, որ նրանց անունները նախապես հայտնվեն իրեն՝ հավանություն ստանալու համար:

Հոդված 8

1. Ներկայացուցչության ղիվանագիտական անձնակազմի անդամները սկզբունքորեն պետք է հանդիսանան ուղարկող պետության քաղաքացիներ:

2. Ընդունող պետության քաղաքացիներ հանդիսացող անձինք չեն կարող նշանակվել ներկայացուցչության ղիվանագիտական անձնակազմի անդամներ այլ կերպ, քան այդ պետության համաձայնությամբ, ընդ որում այդ համաձայնությունը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարվել:

3. Ընդունող պետությունը կարող է նույն իրավունքն իրեն վերապահել երրորդ պետության այն քաղաքացիների նկատմամբ, որոնք նաև ուղարկող պետության քաղաքացիներ չեն հանդիսանում:

Հոդված 9

1. Ընդունող պետությունը ցանկացած ժամանակ, պարտավոր չլինելով պատճառաբանել իր որոշումը, կարող է տեղեկացնել ուղարկող պետությանը, որ ներկայացուցչության ղեկավարը կամ ներկայացուցչության ղիվանագիտական անձնակազմի որևէ անդամ հանդիսանում է «persona non grata» (անցանկալի անձ) կամ որ ներկայացուցչության ցանկացած այլ անդամ հանդիսանում է անընդունելի: Այդ դեպքում ուղարկող պետությունը համապատասխանաբար պետք է հետ կանչի տվյալ անձին կամ դադարեցնի նրա գործառույթները ներկայացուցչությունում: Անձը կարող է «non grata» (անցանկալի անձ) կամ անընդունելի հայտարարվել մինչև ընդունող պետության տարածք ժամանելը:

2. Եթե ուղարկող պետությունը բնականոն ժամանակահատվածի ընթացքում հրաժարվի կատարելուց կամ ընդունելի ժամկետում չկատարի սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված իր պարտավորությունները, ընդունող պետությունը կարող է հրաժարվել տվյալ անձին ներկայացուցչության աշխատակից ճանաչելուց:

Հոդված 10

1. Ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը կամ այլ նախարարությանը, որի վերաբերյալ պայմանավորվածություն կա, ծանուցվում է.

ա) ներկայացուցչության անդամների նշանակման, նրանց ժամանման և վերջնական մեկնման մասին կամ ներկայացուցչությունում նրանց գործառույթների դադարեցման մասին,

բ) ներկայացուցչության անդամի ընտանիքին պատկանող անձի ժամանման ու վերջնական մեկնման մասին և, հարկ եղած դեպքերում, այն մասին, որ այս կամ այն անձը դառնում է կամ դադարել է լինել ներկայացուցչության անդամի ընտանիքի անդամ,

գ) սույն կետի «ա» ենթակետում հիշատակված անձանց մոտ ծառայության անցած մասնավոր տնային աշխատողների ժամանման և վերջնական մեկնման մասին և հարկ եղած դեպքերում՝ այդ անձանց մոտ նրանց ծառայությունը դադարեցնելու մասին,

դ) ընդունող պետությունում բնակվող անձանց՝ որպես ներկայացուցչության արտոնություններ և անձեռնմխելիություն ունեցող անդամներ կամ տնային աշխատողներ վարձելու կամ ազատելու մասին:

2. Ժամանման և վերջնական մեկնման մասին նույնպես պետք է տեղեկացվի վաղօրոք՝ ըստ հնարավորության:

Հոդված 11

1. Ներկայացուցչության անձնակազմի թվաքանակի մասին կոնկրետ համաձայնության բացակայության դեպքում ընդունող պետությունը կարող է առաջարկել, որպեսզի ներկայացուցչության անձնակազմի թվաքանակը պահպանվի այն սահմաններում, որոնք ինքը գտնում է բնական և նորմալ, հաշվի առնելով ընդունող պետությունում գոյություն ունեցող հանգամանքներն ու պայմանները և տվյալ ներկայացուցչության պահանջումները:

2. Ընդունող պետությունը կարող է նաև նույն հիմունքներով և առանց խտրականության հրաժարվել որոշակի կատեգորիայի պաշտոնատար անձանց ընդունելուց:

Հոդված 12

Ուղարկող պետությունը առանց ընդունող պետության որոշակիորեն արտահայտված նախնական համաձայնության չի կարող հիմնել դիվանագիտական ներկայացուցչության մասը կազմող գրասենյակներ բնակավայրերում, բացի այն վայրերից, որտեղ հիմնված է ինքը՝ ներկայացուցչությունը:

Հոդված 13

1. Ներկայացուցչության ղեկավարը համարվում է ընդունող պետությունում իր գործառույթների կատարմանն անցած այդ պետություններում գոյություն ունեցող պրակտիկայի համաձայն, որի կիրառումը պետք է լինի միատեսակ իր հավատարմագրերը հանձնելու պահից, կամ ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը կամ այլ նախարարությանը, որի վերաբերյալ կա պայմանավորվածություն, իր ժամանման մասին հայտնելու և հավատարմագրերի հաստատված պատճենները ներկայացնելու պահից:

2. Հավատարմագիրը հանձնելու կամ դրանց հաստատված պատճենները ներկայացնելու հերթականությունը որոշում է ներկայացուցչության ղեկավարի ժամանման ամսաթվով և ժամով:

Հոդված 14

1. Ներկայացուցչության ղեկավարները ստորաբաժանվում են երեք դասի, որոնք են.

ա) պետությունների ղեկավարների առընթեր հավատարմագրող դեսպանների և նվիրակների և համարժեք աստիճանի ներկայացուցչությունների այլ ղեկավարներին դաս,

բ) պետությունների ղեկավարներին առընթեր հավատարմագրվող դեսպանների և փոխնվիրակների դաս,

գ) արտաքին գործերի նախարարներին առընթեր հավատարմագրվող գործերի հավատարմատարների դաս:

2. Ոչ այլ կերպ, քան ելնելով ավագությունից և վարվելակարգից, ոչ մի տարբերություն չպետք է դրվի ներկայացուցչությունների ղեկավարների միջև՝ նրանց այս կամ այն դասին պատկանելու հետևանքով:

Հոդված 15

Այն դասը, որին պետք է պատկանեն ներկայացուցչությունների ղեկավարները, որոշում է պետությունների միջև համաձայնությամբ:

Հոդված 16

1. Ներկայացուցչությունների համապատասխան դասի ղեկավարների ավագությունը որոշվում է իրենց գործառույթների կատարման անցնելու ամսաթվով և ժամով՝ համաձայն 18-րդ հոդվածի:

2. Ներկայացուցչության ղեկավարի հավատարմագրման այն փոփոխությունները, որոնք չեն առաջացնում դասի փոփոխություն, չեն անդրադառնում նրա ավագության վրա:

3. Սույն հոդվածը չի շոշափում Սուրբ Աթոռի ներկայացուցչի ավագության վերաբերյալ ընդունող պետությունում ընդունված պրակտիկան:

Հոդված 17

Ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամների ավագությունը ներկայացուցչության ղեկավարի կողմից հայտնվում է արտաքին գործերի նախարարությանը կամ այն նախարարությանը, որի վերաբերյալ կա պայմանավորվածություն:

Հոդված 18

Յուրաքանչյուր պետությունում ներկայացուցչությունների ղեկավարներին ընդունելիս պահպանվող կարգը պետք է միատեսակ լինի յուրաքանչյուր դասի նկատմամբ:

Հոդված 19

1. Եթե ներկայացուցչության ղեկավարի տեղը թափուր է կամ, եթե ներկայացուցչության ղեկավարը չի կարող կատարել իր գործառույթները, ներկայացուցչության ղեկավարի պարտականությունների ժամանակավոր պաշտոնատար հանդիսանում է գործերի ժամանակավոր հավատարմատարը: Գործերի ժամանակավոր հավատարմատարի անունը և ազգանունը ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը կամ այն նախարարությանը, որի վերաբերյալ կա պայմանավորվածություն, հայտնում է ներկայացուցչության ղեկավարը կամ, եթե նա ի վիճակի չէ դա անելու, ուղարկող պետության արտաքին գործերի նախարարությունը:

2. Այն դեպքերում, երբ ներկայացուցչության ոչ մի դիվանագիտական անդամ չի գտնվում ընդունող պետությունում, վարչական և տեխնիկական անձնակազմի անդամը, ընդունող պետության համաձայնությամբ, կարող է ուղարկող պետության կողմից նշանակվել ներկայացուցչության ընթացիկ վարչական գործերի վարման պատասխանատու:

Հոդված 20

Ներկայացուցչությունը և նրա ղեկավարը իրավունք ունեն ուղարկող պետության դրոշը և զինանշանն օգտագործել ներկայացուցչության շինությունների վրա, ներառյալ ներկայացուցչության ղեկավարի նստավայրի, ինչպես նաև նրա փոխադրամիջոցների վրա:

Հոդված 21

1. Ընդունող պետությունը իր օրենքների համաձայն պետք է աջակցի ուղարկող պետությանը, իր տարածքում ձեռք բերելու ներկայացուցչության գործունեության համար անհրաժեշտ շինություններ, կամ պետք է ուղարկող պետությանը օգնություն ցույց տա որևէ այլ ճանապարհով շինություններ ստանալու համար:

2. Նա անհրաժեշտության դեպքում պետք է նաև ներկայացուցչություններին օգնություն ցուցաբերի հարմար շինություններ ձեռք բերելու իրենց անդամների համար:

Հոդված 22

1. Ներկայացուցչության շինությունները անձեռնմխելի են: Ընդունող պետության իշխանությունները չեն կարող մուտք գործել այդ շինությունները այլ կերպ, քան ներկայացուցչության ղեկավարի համաձայնությամբ:

2. Ընդունող պետության վրա հատուկ պարտականություն է դրվում բոլոր պատշաճ միջոցները ձեռնարկել ներկայացուցչության շինությունները ամեն տեսակ ներխուժումներից կամ վնաս հասցնելուց պաշտպանելու և ներկայացուցչության անդորրին ամեն տեսակ խախտումը կամ արժանապատվությունը վիրավորելը կանխելու համար:

3. Ներկայացուցչության շինությունը, կահավորանքի առարկաները և այնտեղ գտնվող մյուս գույքը, ինչպես նաև ներկայացուցչության փոխադրամիջոցները օգտվում են խուզարկման, բռնագրավման, կալանքի և հարկադրական գործողությունների անձեռնմխելիությունից:

Հոդված 23

1. Ուղարկող պետությունը և ներկայացուցչության ղեկավարն ազատվում են ներկայացուցչության մասնավոր կամ վարձու շինություններին վերաբերող պետական՝ շրջանային և տեղական բոլոր հարկերից ու տուրքերից, բացի այն վճարներից, որոնք իրենցից ներկայացնում են սպասարկման կոնկրետ տեսակների համար գանձվող վարձ:

2. Սույն հոդվածում նշված հարկումից ազատումը չի վերաբերում այն հարկերին ու տուրքերին, որոնց ընդունող պետության օրենքներին համապատասխան, ենթարկվում են այն անձինք, որոնք պայմանագրեր են կնքել ուղարկող պետության կամ ներկայացուցչության ղեկավարի հետ:

Հոդված 24

Ներկայացուցչության արխիվները և փաստաթղթերն անձեռնմխելի են ցանկացած ժամանակ և անկախ դրանց գտնվելու վայրից:

Հոդված 25

Ներկայացուցչության կողմից իր գործառույթները կատարելու համար ընդունող պետությունը պետք է ընձեռի բոլոր հնարավորությունները:

Հոդված 26

Ընդունող պետությունը պետք է ապահովի ներկայացուցչության բոլոր անդամների ազատ տեղաշարժը իր տարածքում, եթե դա չի հակասում այն գոտիների մասին օրենքներին ու կանոններին, որտեղ մուտք գործելն արգելվում է կամ կարգավորվում է ազգային անվտանգության ապահովման նկատառումներով:

Հոդված 27

1. Ընդունող պետությունը պետք է թույլատրի և պահպանի ներկայացուցչության ազատ հարողակցությունը բոլոր պաշտոնական նպատակներով: Ուղարկող պետության կառավարության ու այլ ներկայացուցիչների և հյուպատոսությունների հետ հարաբերությունների ընթացքում, որտեղ էլ որ դրանք գտնվեն, ներկայացուցչությունը կարող է օգտագործել բոլոր հարմար միջոցները, ներառյալ դիվանագիտական սուրհանդակները և ծածկագիր կամ գաղտնագիր հեռագրերը: Այնուամենայնիվ, ներկայացուցչությունը ռադիոհաղորդիչ տեղադրել և օգտագործել կարող է միայն ընդունող պետության համաձայնությամբ:

2. Ներկայացուցչության պաշտոնական թղթակցությունը անձեռնմխելի է: Պաշտոնական թղթակցություն ասելով հասկացվում է այն ամբողջ թղթակցությունը, որը վերաբերում է ներկայացուցչությանը և նրա գործառույթներին:

3. Դիվանագիտական փոստը ենթակա չէ ոչ բացման, ոչ էլ կալանքի:

4. Դիվանագիտական փոստ կազմող բոլոր ծանրոցները պետք է ունենան դրանց բնույթը մատնանշող, տեսանելի արտաքին նշաններ, և դրանք կարող են պարունակել միայն դիվանագիտական փաստաթղթեր և պաշտոնական օգտագործման համար նախատեսված առարկաներ:

5. Դիվանագիտական սուրհանդակը, որը պետք է ունենա իր կարգավիճակի և դիվանագիտական փոստը կազմող ծանրոցների քանակը՝ նշելով պաշտոնական փաստաթուղթը, իր ծառայողական պարտականությունները կատարելիս օգտվում է ընդունող պետության պաշտպանությունից: Նա օգտվում է անձնական անձեռնմխելիությունից և ենթակա չէ, որևէ ձևի ձերբակալման կամ կալանքի:

6. Ուղարկող պետությունը կամ ներկայացուցչությունը կարող են նշանակել «ad hoc» հատուկ դիվանագիտական սուրհանդակներ: Այդ դեպքերում նույնպես կիրառվում են սույն հոդվածի 5-րդ կետի դրույթները այն բացառությամբ, որ այնտեղ նշված անձեռնմխելիությունը դադարում է այդ սուրհանդակի կողմից դիվանագիտական փոստը ըստ նշանակման հասցնելու պահին:

7. Դիվանագիտական փոստը կարող է վստահվել քաղաքացիական այն օդանավի անձնակազմի հրամանատարին, որն ուղևորվում է ժամանելու համար թույլատրված օդանավակայան: Հրամանատարը պետք է ունենա պաշտոնական փաստաթուղթ, որտեղ նշված լինի փոստ կազմող ծանրոցների քանակը, սակայն նա դիվանագիտական սուրհանդակ չի համարվում: Ներկայացուցչությունը կարող է իր անդամներից որևէ մեկին ուղարկել օդանավի հրամանատարից դիվանագիտական փոստը անմիջականորեն և անարգել ստանալու համար:

Հոդված 28

Այն վարձատրություններն ու գանձումները, որոնք ներկայացուցչությունը վերցնում է իր պաշտոնական պարտականությունները կատարելիս, ազատվում են բոլոր հարկերից և տուրքերից:

Հոդված 29

Դիվանագիտական գործակալը անձեռնմխելի է: Նա ենթակա չէ ձերբակալման կամ կալանքի: Ընդունող պետությունը պարտավոր է նրան վերաբերել պատշաճ հարգանքով և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու նրա անձի, ազատության կամ արժանապատվության հանդեպ որևէ ոտնձգություն:

Հոդված 30

1. Դիվանագիտական գործակալի մասնավոր նստավայրը օգտվում է նույն անձեռնմխելիությունից և պաշտպանությունից, ինչից օգտվում են ներկայացուցչության շինությունները:

2. Նրա թղթերը, թղթակցությունը և, բացառությամբ 31-րդ հոդվածի 3-րդ կետում նախատեսվածից, նրա գույքը հավասարապես օգտվում են անձեռնմխելիությունից:

Հոդված 31

1. Դիվանագիտական գործակալը օգտվում է ընդունող պետության քրեական ընդդատության անձեռնմխելիությունից: Նա օգտվում է նաև քաղաքացիական և վարչական ընդդատության անձեռնմխելիությունից, բացի.

ա) գույքային հայցերից, որոնք վերաբերում են ընդունող պետության տարածքում գտնվող անշարժ մասնավոր գույքին, եթե միայն նա դրան չի տիրապետում ուղարկող պետության անունից՝ ներկայացուցչության նպատակներով,

բ) ժառանգությանը վերաբերող հայցերից, որոնց նկատմամբ դիվանագիտական գործակալը հանդես է գալիս իբրև կտակը կատարող, ժառանգված գույքի խնամակալ, ժառանգորդ կամ մերժվող կողմ, որպես մասնավոր անձ և ոչ թե ուղարկված պետության անունից,

գ) ցանկացած մասնագիտական կամ առևտրային գործունեությանը վերաբերող հայցերից, որը դիվանագիտական գործակալը իրականացնում է ընդունող պետությունում՝ իր պաշտոնական գործառնությունների սահմաններից դուրս:

2. Դիվանագիտական գործակալը պարտավոր չէ ցուցմունքներ տալ որպես վկա:

3. Ոչ մի հարկադիր միջոց չի կարող ձեռնարկվել դիվանագիտական գործակալի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, որոնք ընկնում են սույն հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «գ» ենթակետերի տակ և ոչ այլ կերպ, քան պայմանով, որ համապատասխան միջոցներ կարող են ձեռնարկվել առանց խախտելու նրա անձի և նրա կեցավայրի անձեռնմխելիությունը:

4. Ընդունող պետության ընդդատության նկատմամբ դիվանագիտական գործակալի անձեռնմխելիությունը նրան չի ազատում ուղարկող պետության ընդդատությունից:

Հոդված 32

1. Դիվանագիտական գործակալների և 37-րդ հոդվածի համաձայն անձեռնմխելիությունից օգտվող անձանց ընդդատության նկատմամբ անձեռնմխելիությունից ուղարկող պետությունը կարող է հրաժարվել:

2. Հրաժարումը միշտ պետք է լինի որոշակիորեն արտահայտված:

3. Դիվանագիտական գործակալի կամ 37-րդ հոդվածի համաձայն ընդդատության անձեռնմխելիությունից օգտվող անձի կողմից, գործի հարուցումը նրան գրկում է անմիջականորեն հիմնական հայցի հետ կապված հանդիպական հայցերի վերաբերյալ ընդդատության անձեռնմխելիությունը վկայակոչելու իրավունքից:

4. Քաղաքացիական և վարչական գործերի վերաբերյալ ընդդատության տակ չընկնող գույքից հրաժարումը չի նշանակում որոշման կատարման վերաբերյալ անձեռնմխելիությունից հրաժարում, դրա համար պահանջում է հատուկ հրաժարում:

Հոդված 33

1. Սույն հոդվածի 3-րդ կետի դրույթների պահպանման պայմանով սոցիալական ապահովության մասին ընդունող պետության մեջ գործող կանոնները չեն տարածվում դիվանագիտական գործակալի այն ծառայությունների վրա, որոնք կատարվում են ուղարկող պետության համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի բացառումը վերաբերում է նաև դիվանագիտական գործակալի մոտ աշխատող տնային աշխատողներին, որոնք դիվանագիտական գործակալի մոտ գտնվում են բացառապես ծառայության մեջ, պայմանով.

ա) որ նրանք չեն հանդիսանում ընդունող պետության քաղաքացիներ և մշտապես այնտեղ չեն բնակվում,

բ) որ նրանց վրա տարածվում են սոցիալական ապահովության մասին ուղարկող պետությունում կամ երրորդ պետությունում գործող կանոնները:

3. Դիվանագիտական գործակալը, որը վարձում է անձանց, որոնց վրա չի տարածվում սույն հոդվածի 2-րդ կետի բացառումը, պետք է կատարի սոցիալական ապահովության մասին ընդունող պետությունում գործող կանոններով, գործատուների վրա դրված պարտականությունները:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նախատեսված բացառումը չի խոչնդոտում ընդունող պետության սոցիալական համակարգին կամավոր մասնակցելուն, պայմանով, որ նման մասնակցությունը թույլատրվում է տվյալ պետության կողմից:

5. Սույն հոդվածի դրույթները չեն շոշափում սոցիալական ապահովության մասին նախկինում կնքված երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերը և չեն խոչնդոտում ապագայում այդպիսի համաձայնագրերի կնքմանը:

Հոդված 34

Դիվանագիտական գործակալը ազատվում է բոլոր տեսակի անձնական և գույքային, պետական, շրջանային և մունիցիպալ հարկերից և տուրքերից, բացի.

ա) անուղղակի հարկերից, որոնք սովորաբար մտնում են ապրանքի կամ սպասարկման գների մեջ,

բ) ընդունող պետության տարածքում գտնվող մասնավոր անշարժ գույքի վրա սահմանված տուրքերից և հարկերից, եթե նա դրան չի տիրապետում, ուղարկող պետության անունից ներկայացուցչության նպատակների համար,

գ) ընդունող պետությունում գանձվող ժառանգության հարկից և ժառանգատուրքից՝ 39-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված բացառումներով հանդերձ,

դ) մասնավոր այն եկամտի վրա սահմանված հարկերից և տուրքերից, որի աղբյուրը գտնվում է ընդունող պետությունում և ընդունող պետության առևտրային ձեռնարկության մեջ ներդրումների հարկերից,

ե) սպասարկման կոնկրետ ձևերի համար կատարվող գանձումներից,

զ) գրանցման, դատական և ցուցակագրական հարկերից, անշարժ գույքին վերաբերող այլ գանձումներից և դրոշմագանձումներից՝ 23-րդ հոդվածում նախատեսված բացառումներով հանդերձ:

Հոդված 35

Ընդունող պետությունը պարտավոր է դիվանագիտական գործակալներին ազատել բոլոր աշխատանքային և պետական պարհակներից, անկախ դրանց բնույթից, ինչպես նաև զինվորական պարհակներից, ինչպիսիք են բռնագրավումը, ռազմատուգանքը և զինվորական օթևան տրամադրելը:

Հոդված 36

1. Ընդունող պետությունը ընդունված օրենքներին և կանոններին համապատասխան թույլատրում է ներմուծել և ազատել բոլոր մաքսային տուրքերից, հարկերից և դրանց հետ կապված գանձումներից, բացառությամբ պահպանման, տեղափոխման և այդ բնույթի ծառայությունների համար գանձումներից.

ա) ներկայացուցչության պաշտոնական օգտագործման համար նախատեսված առարկաները,

բ) դիվանագիտական գործակալի կամ նրա ընտանիքի՝ նրա հետ միասին ապրող անդամների անձնական օգտագործման համար նախատեսված իրերը, ներառյալ այն իրերը, որոնք նախատեսված են վերջիններիս առանձին օգտագործման համար:

2. Դիվանագիտական գործակալի անձնական ուղեբեռը ազատվում է զննումից, եթե լուրջ հիմքեր չկան ենթադրելու, որ այն պարունակում է իրեր, որոնց վրա չեն տարածվում սույն հոդվածի 1-ին կետում նշված բացառումները, կամ էլ առարկաները, որոնց ներմուծումն ու արտահանումը արգելված են օրենքով կամ կարգավորվում են ընդունող պետության կարանտինային կանոններով: Նման զննումը պետք է կատարվի դիվանագիտական գործակալի կամ նրա կողմից լիազորված անձի ներկայությամբ:

Հոդված 37

1. Դիվանագիտական գործակալի ընտանիքի (նրա հետ միասին ապրող) անդամները օգտվում են 29-ից 36-րդ հոդվածներում նշված արտոնություններից և անձեռնմխելիությունից, եթե նրանք չեն հանդիսանում ընդունող պետության քաղաքացիներ:

2. Ներկայացուցչության վարչական և տեխնիկական անձնակազմի անդամները և նրանց ընտանիքների՝ նրանց հետ ապրող անդամները, եթե նրանք չեն հանդիսանում ընդունող պետության քաղաքացիներ կամ այնտեղ չեն բնակվում մշտապես, օգտվում են 29-ից 35-րդ հոդվածներում նշված արտոնություններից և անձեռնմխելիությունից այն բացառությամբ, որ ընդունող պետության քաղաքացիական և վարչական՝ 31-րդ հոդվածի 1-ին կետում նշված ընդդատության անձեռնմխելիությունը չի տարածվում այն գործողությունների վրա, որոնք նրանց կողմից կատարվել են ոչ իրենց պարտականությունները իրականացնելիս: Նրանք օգտվում են նաև առանձին օգտագործման իրերի վերաբերյալ 36-րդ հոդվածի 1-ին կետում նշված արտոնություններից:

3. Ներկայացուցչության սպասարկող անդամները, որոնք չեն հանդիսանում ընդունող պետության քաղաքացիներ կամ այնտեղ չեն բնակվում մշտապես, օգտվում են անձեռնմխելիությունից իրենց պարտականությունները իրականացնելիս կատարած գործողությունների ժամանակ և ազատվում են ծառայության դիմաց ստացվող աշխատավարձի հարկումից, գանձումներից և տուրքերից, ինչպես նաև օգտվում են 33-րդ հոդվածում նշված բացառություններից:

4. Ներկայացուցչության աշխատակիցների տնային աշխատողները, եթե նրանք նստավայր պետության քաղաքացիներ չեն հանդիսանում կամ այնտեղ չեն բնակվում, մշտապես ազատվում են ծառայության դիմաց ստացվող աշխատավարձի հարկումից,

զանձումներից և տուրքերից: Այլ հարաբերություններում նրանք արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվում են այնչափ, որչափ որ դա թույլատրվում է ընդունող պետությունում: Սակայն ընդունող պետությունը պետք է իր ընդդատությունը այդ անձի նկատմամբ իրականացնի այնպես, որ անհարկի չմիջամտի ներկայացուցչության ֆունկցիաների իրագործմանը:

Հոդված 38

1. Ընդունող պետության քաղաքացի հանդիսացող կամ այնտեղ մշտապես բնակվող դիվանագիտական գործակալը, բացի այն լրացուցիչ արտոնություններից ու անձեռնմխելիությունից, որոնք կարող են հատկացվել ընդունող պետության կողմից, օգտվում է ընդդատության անձեռնմխելիությունից միայն իր գործառույթները կատարելիս՝ պաշտոնական գործողությունների ժամանակ:

2. Ներկայացուցչության մյուս անդամները և տնային աշխատողները, որոնք հանդիսանում են ընդունող պետության քաղաքացիներ կամ այնտեղ բնակվում են մշտապես, արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվում են այնքանով, որքանով դա թույլատրվում է ընդունող պետությունը: Սակայն ընդունող պետությունը պետք է այդ անձանց նկատմամբ իր ընդդատությունն իրականացնի այնպես, որ անհարկի չմիջամտի ներկայացուցչության գործառույթների իրագործմանը:

Հոդված 39

1. Արտոնությունների և անձեռնմխելիության իրավունք ունեցող յուրաքանչյուր անձ դրանից օգտվում է ընդունող պետության տարածքում մուտք գործելու պահից, երբ նա ուղևորվում է իր պաշտոնը զբաղեցնելու կամ, եթե նա այդ տարածքում է, այն պահից, երբ նրա նշանակման մասին հայտնվում է արտաքին գործերի նախարարությանը կամ այն նախարարությանը, որի վերաբերյալ կա պայմանավորվածություն:

2. Եթե արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձի գործառույթները ավարտվում են, ապա այդ արտոնություններն ու անձեռնմխելիությունը նորմալ կարգով դադարում են այն պահից, երբ նա մեկնում է երկրից կամ այդ բանն անելու ընդունելի ժամկետի ավարտից հետո, բայց դրանք շարունակում են գոյություն ունենալ մինչև այդ ժամանակը՝ անգամ զինված ընդհարման դեպքում: Սակայն այն գործողությունների նկատմամբ, որոնք այդ անձը կատարել է ներկայացուցչության անդամի իր գործառույթները իրականացնելիս, անձեռնմխելիությունը շարունակում է գոյություն ունենալ:

3. Ներկայացուցչության անդամի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամները շարունակում են օգտվել այն արտոնություններից և անձեռնմխելիությունից, որոնց իրավունքն ունեն մինչև ընդունող երկիրը թողնելու ընդունելի ժամկետի ավարտը:

4. Ներկայացուցչության՝ ընդունող պետության քաղաքացի չհանդիսացող կամ այնտեղ մշտապես չբնակվող աշխատակցի կամ նրա հետ բնակվող անդամի մահվան դեպքում ընդունող պետությունը պետք է թույլատրի հանգուցյալի շարժական գույքի դուրս բերումը, բացառությամբ այն ամբողջ գույքի, որը ձեռք է բերվել այդ երկրում և դրա դուրս բերումը նրա մահվան պահին արգելված է: Ժառանգության տուրք չեն գանձվում այն շարժական գույքից, որի առկայությունը ընդունող պետությունում պայմանավորված է բացառապես մահացածի՝ ներկայացուցչության անդամի կամ ներկայացուցչության անդամի ընտանիքի անդամի այնտեղ գտնվելով:

Հոդված 40

1. Եթե դիվանագիտական գործակալը անցնում է այն երրորդ պետության տարածքով, որը մուտքի արտոնագիր է տվել նրան, եթե դա անհրաժեշտ է, կամ նա

գտնվում է այդ տարածքում պաշտոնը զբաղեցնելու համար ուղևորվելիս կամ այդ պաշտոնին, կամ էլ իր երկիր վերադառնալիս, ապա երրորդ պետությունը նրան տրամադրում է անձեռնմխելիություն և այնպիսի այլ արտոնություններ, որոնք կպահանջվեն նրա տարանցման կամ վերադառնալու ապահովման համար: Դա վերաբերում է նաև նրա ընտանիքի՝ արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող ցանկացած անդամներին, որոնք ուղեկցում են դիվանագիտական գործակալին կամ ուղևորում են առանձին՝ նրան միանալու կամ իրենց երկիր վերադառնալու համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքներին համանման հանգամանքների դեպքում երրորդ պետությունները չպետք է խոչընդոտեն իրենց տարածքով ներկայացուցչության վարչական և տեխնիկական կամ սպասարկվող անձնակազմի, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին անցնելուն:

3. Երրորդ պետությունները տարանցիկ պաշտոնական թղթակցությանը և պաշտոնական այլ հաղորդումներին, ներառյալ կողավորված կամ ծածկագիր հաղորդումները, պետք է տան այնպիսի ազատություն և պաշտպանություն, ինչպիսին տրամադրում է ընդունող պետությունը: Նրանք դիվանագիտական սուրհանդակներին, որոնց տրվել է մուտքի արտոնագիր, եթե այդպիսին անհրաժեշտ է, տարանցիկ դիվանագիտական փոստին պետք է տրամադրեն այն նույն անձեռնմխելիությունը և պաշտպանությունը, ինչպիսին պարտավոր է տրամադրել ընդունող պետությունը:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված երրորդ պետությունների պարտավորությունները վերաբերում են նաև այդ կետերում նշված անձանց ու պաշտոնական հաղորդակցությանը և դիվանագիտական փոստին, որոնց գտնվելը երրորդ պետության տարածքում առաջացել է անհաղթահարելի (ֆորս-մաժորային) հանգամանքներով:

Հոդված 41

1. Առանց վնասելու իրենց արտոնություններին և անձեռնմխելիությանը, այդ արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող բոլոր անձինք պարտավոր են հարգել ընդունող պետության օրենքներն ու որոշումները: Նրանք նաև պարտավոր են չմիջամտել այդ պետության ներքին գործերին:

2. Ուղարկող պետության կողմից ներկայացուցչությանը վստահված բոլոր պաշտոնական գործերը կատարվում են ընդունող պետության արտաքին գործերի նախարարության հետ (կամ միջոցով), կամ այլ նախարարության հետ (կամ միջոցով), որի վերաբերյալ կա պայմանավորվածություն:

3. Ներկայացուցչության շինությունները չպետք է օգտագործվեն ներկայացուցչության այն գործառույթների հետ անհամատեղելի նպատակներով, որոնք նախատեսված են սույն կոնվենցիայով կամ միջազգային իրավունքի այլ նորմերով, կամ էլ որևէ հատուկ համաձայնագրով, որոնք գործում են ուղարկող պետության և ընդունող պետության միջև:

Հոդված 42

Դիվանագիտական գործակալը ընդունող պետությունում չպետք է զբաղվի անձնական շահի նպատակով մասնագիտական կամ առևտրային գործունեությամբ:

Հոդված 43

Դիվանագիտական գործակալի գործառույթները ավարտվում են մասնավորապես.

ա) ընդունող պետությանը ուղարկող պետության կողմից արված ծանուցմամբ այն մասին, որ դիվանագիտական գործակալի գործառույթները ավարտվել են,

բ) ուղարկող պետությանը ընդունող պետության կողմից արված այն ծանուցմամբ, որ համաձայն 9-րդ հոդվածի 2-րդ կետի նա հրաժարվում է դիվանագիտական գործակալին ներկայացուցչության անդամ ճանաչելուց:

Հոդված 44

Ընդունող պետությունը, անգամ զինված ընդհարման դեպքում պետք է աջակցություն ցուցաբերի, որն անհրաժեշտ է ընդունող պետության քաղաքացիներ չհանդիսացող՝ արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամներին՝ հնարավորին չափ արագ մեկնելու համար, անկախ նրանց քաղաքացիությունից: Ընդունող պետությունը անհրաժեշտության դեպքում, մասնավորապես, պետք է նրանց տրամադրության տակ դնի փոխադրամիջոցներ, որոնք անհրաժեշտ են նրանց և նրանց գույքի համար:

Հոդված 45

Երկու պետությունների միջև կամ դիվանագիտական հարաբերությունների խզման, կամ ներկայացուցչության վերջնական կամ ժամանակավոր հետկանչի դեպքում.

ա) ընդունող պետությունը պարտավոր է անգամ զինված ընդհարման դեպքում հարգել ու պահպանել ներկայացուցչության շինությունները՝ նրա գույքով և արխիվներով հանդերձ,

բ) ուղարկող պետությունը կարող է իր ներկայացուցչության շինությունների, գույքի և արխիվների պահպանությունը վստահել այն երրորդ պետությանը, որն ընդունելի է ընդունող պետության համար,

գ) ուղարկող պետությունը կարող է իր և իր քաղաքացիների շահերի պաշտպանությունը վստահել այն երրորդ պետությանը, որն ընդունելի է ընդունող պետության համար:

Հոդված 46

Ուղարկող պետությունը կարող է ընդունող պետության նախնական համաձայնությամբ և ընդունող պետությունում չներկայացված երրորդ պետության խնդրանքով ժամանակավորապես իր վրա վերցնել այդ երրորդ պետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությունը:

Հոդված 47

1. Սույն Կոնվենցիայի դրույթները կիրառելիս ընդունող պետությունը պետությունների միջև խտրականություն չպետք է ցուցաբերի:

2. Սակայն չի համարվում, որ տեղի է ունեցել խտրականություն.

ա) եթե ընդունող պետությունը սույն Կոնվենցիայի դրույթներից որևէ մեկը կիրառում է սահմանափակ ձևով, նկատի ունենալով իր ներկայացուցչության նկատմամբ ուղարկող պետության մեջ այդ դրույթի սահմանափակման կիրառումը,

բ) եթե սովորույթի բերումով կամ համաձայնագրով պետությունները միմյանց հատկացնում են առավել նպաստավոր ռեժիմ, քան այն, ինչ պահանջվում է սույն Կոնվենցիայի դրույթներով:

Հոդված 48

Սույն Կոնվենցիան ստորագրելու համար բաց է Միավորված ազգերի կազմակերպության անդամներ հանդիսացող բոլոր պետությունների,

մասնագիտացված հաստատությունների կամ Միջազգային դատարանի Կանոնադրության Կողմերի համար, ինչպես նաև ցանկացած ուրիշ պետության համար, որը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հրավիրված է դառնալու Կոնվենցիայի մասնակից մինչև 1961 թվականի հոկտեմբերի 31-ը՝ Ավստրիայի արտաքին գործերի դաշնային նախարարությունում, իսկ այսուհետ՝ մինչև 1962 թվականի մարտի 31-ը, Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում՝ Նյու Յորքում:

Հոդված 49

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերը ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 50

Սույն Կոնվենցիան բաց է 48-րդ հոդվածում թվարկված բոլոր չորս կատեգորիաներից որևէ մեկին պատկանող ցանկացած պետության միանալու համար: Միանալու ակտերը տրվում են ի պահ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 51

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 22-րդ վավերագիրը կամ միանալու մասին ակտը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո:

2. Յուրաքանչյուր պետության նկատմամբ, որը վավերացնում է Կոնվենցիան կամ միանում է դրան 22-րդ վավերագիրը կամ միանալու մասին ակտը ի պահ հանձնելուց հետո, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից իր վավերագիրը կամ միանալու ակտը ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

Հոդված 52

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը 48-րդ հոդվածում թվարկված չորս կատեգորիաներից որևէ մեկին պատկանող բոլոր պետություններին ծանուցում է.

ա) սույն Կոնվենցիան ստորագրելու և վավերացնելու կամ միանալու մասին ակտերը ի պահ հանձնելու մասին՝ 46-րդ, 49-րդ և 50-րդ հոդվածներին համապատասխան,

բ) սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարեթվի մասին՝ 51-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 53

Սույն Կոնվենցիայի բնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, կտրվի ի պահ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրա հաստատված պատճենները կուղարկի 48-րդ հոդվածում թվարկված չորս կատեգորիաներից որևէ մեկին պատկանող բոլոր պետություններին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները պատշաճ կերպով, լիազորված իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Վիեննա քաղաքում, 1961 թվականի ապրիլի 18-ին:

***Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 23-ից:**